

ԿԳՆ

Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարան

Համակարգիչների շահագործում`
օպերատոր համակարգչի

Մոդուլի անվանումը
"Վեկտորային գրաֆիկայի համակարգեր"

| | |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 1. Ձևավորել գրաֆիկական փաստաթղթեր և կատարել ձևաբարական բազմաբնույթ աշխատանքներ | |
| 1.1. Կնտային և վեկտորական գրաֆիկա: Գրաֆիկական աշխատանքների ծրագրային ապահովում: | 2 |
| 1.2. CorelDraw ծրագրի պատուհանը, գլխավոր ընտրացուցակը, Գրաֆիկական ֆայլերի ֆորմատները: | 3 |
| 1.3. ToolBox աշխատանքային գործիքների հավաքածուն: | 6 |
| 1.4. Պատկերների կառուցվածքը: Ռեդդանկյուններ, էլիպսներ, բազմանկյուններ և աստղեր, պարույրներ, ցանցեր, ստանդարտ պատկերներ: | 7 |
| 1.5. Կորեր, հանգույցներ, փակ, բաց, միացված գծեր: Freehand, Bezier գործիքները, Artistic Media (զեղագրական գիծ) գործիքը, չափադրման գծեր: | 10 |
| 1.6. Օբյեկտի ձևի խմբագրման գործիքներ: Հանգույցների նշում, տեղափոխում, խմբագրում, կորերի բաժանում և հանգույցների միացում: | 12 |
| 1.7. Կորդինատային ցանց, ուղղորդներ, օբյեկտների հավասարեցումը: | 14 |
| 1.8. Կորդինատային ցանց, ուղղորդներ, օբյեկտների շերտեր: | 16 |
| 1.9. Մի քանի օբյեկտներից մեկի ստացում: Պատկերների պատճենում, նախորդ գործողության կրկնում: Օբյեկտների խմբավորում, կոմբինացիա, տրամաբանական գործողություններ՝ հատում, միացում, բացառում: | 18 |
| 1.10. Գունային մոդելներ և ռեժիմներ: RGB, CMYK, HSB, Lab մոդելներ: Bitmap, Grayscale, RGB, Indexed Color և CMYK ռեժիմներ: Օբյեկտների ներկումը CorelDraw -ում: | 22 |
| 1.11. Պատկերների եզրագիծը: Պատկերների եզրագծի պարամետրերը և նրանց դեկավարումը: | 26 |
| 1.12. Եզրագծի պարամետրերի գործիքները: OutlinePen պատուհանի կառուցվածքը: | 27 |
| 2. Գրաֆիկական փաստաթղթերում զետեղել տեքստեր (սովորական, ձևավոր) և օգտագործել տեքստային էֆեկտներ: | |
| 2.1. Սիմվոլային և ձևավոր տեքստերի ստեղծումը, ֆորմատավորումը և խմբագրումը: | 28 |
| 2.2. Տեքստերի տեղադրումը օբյեկտների մեջ, տեքստի մեջ օբյեկտի տեղադրումը: | 29 |
| 2.3. Տեքստերի տեղադրումը օբյեկտների մեջ | 30 |
| 2.4. Տեքստի մեջ օբյեկտի տեղադրումը: | 31 |
| 2.5. Տեքստի տեղադրումը ցանկացած կորի վրա: | 32 |
| 2.6. Ձևավոր տեքստի նկատմամբ էֆեկտների կիրառումը: | 33 |
| 2.7. ENVELOPE էֆեկտի կիրառումը: | 34 |
| 2.8. BLEND էֆեկտի կիրառումը: | 35 |
| 2.9. EXTRUDE էֆեկտի կիրառումը: | 36 |
| 3. Օգտագործել վեկտորային և կնտային էֆեկտներ վեկտորային գրաֆիկայի համակարգերում: | |
| 3.1. Վեկտորական պատկերների էֆեկտները: Օբյեկտների խմբագրումը պատյանի օգնությամբ (Envelope): | 37 |
| 3.2. Ստվերների և տարածական մարմինների կառուցումը: Ոսպնյակի էֆեկտը: Ոսպնյակների տեսակները: | 40 |
| 3.3. Ստվերների կառուցումը: | 42 |
| 3.4. Տարածական մարմինների կառուցումը: | 43 |
| 3.5. Ոսպնյակի էֆեկտը: | 44 |
| 3.6. Ոսպնյակների տեսակները: | 45 |
| 3.7. Ձևավոր կտրվածք: PowerClip էֆեկտի կիրառումը: | 47 |
| 3.8. Ձևավոր կտրվածք: | 48 |
| 3.9. PowerClip էֆեկտի կիրառումը: | 49 |
| 3.10. Կնտային պատկերներ: Կնտային պատկերների վերափոխումը վեկտորայինի: | 50 |
| 3.11. Կնտային գրաֆիկայի էֆեկտները: Կնտային գրաֆիկայի էֆեկտների կիրառումը: Gaussian Blur | 51 |
| 3.12. Color transform | 52 |
| 3.13. Distorte | 53 |

1.1 Կենտային և վեկտորական գրաֆիկա: Գրաֆիկական աշխատանքների ծրագրային ապահովում

CorelDRAW ծրագիրը հանդիսանում է համակարգչային գրաֆիկաի ասպարեզում ամենատարածված վեկտորային գրաֆիկաի խմբագիր: Օգտագործման հարմարավետությունը, պարամետրերի փոփոխման ճկունությունը, բազմաթիվ վեկտորային էֆեկտների կիրառման հնարավորությունը անշուշտ ներգրավում է բազմաթիվ օգտվողներին ամբողջ աշխարհում: Պատկերը համակարգչում կարող է ձևավորվել երկու հիմնական եղանակով: Նա կարող է կառուցված լինել տարբեր գույն և պայծառություն ունեցող ուղղանկյուններից: Նմանատիպ պատկերները կոչվում են կենտային կամ պիքսելային: CorelDRAW խմբագիրը կարողանում է աշխատել պիքսելային պատկերների հետ, սակայն հիմնական նշանակությունն է՝ վեկտորային պատկերների ստեղծումն ու մշակումը: Այն օբյեկտներ, որտեղ բացահայտ տրված են միայն առանձին կետեր (հանգույցներ), իսկ նրանց միացումները ենթարկվում են հատուկ մաթեմատիկական օրենքներին, կոչվում են վեկտորային: Վեկտորային օբյեկտները կարող են ունենալ լիցք՝ ներկված ներքին հատված և եզրագիծ՝ օբյեկտի գույնավոր սահմաններ: Խմբագիրն ունի աշխատելու հնարավորություն նաև արտաքին ծրագրերից տեղադրված օբյեկտների OLE (Object Linking and Embedding հետ: CorelDRAW ծրագրում բոլոր օբյեկտները դասավորվում են խիստ կանոնակարգված: Նախ և առաջ նրանք տեղադրվում են տարբեր պլաններում և մեկ օբյեկտը փակում է մյուսին: Երկրորդը՝ ֆայլը կազմված է շերտերից, որոնց դասավորվածությունը կարելի է կառավարել Object Manager պատուհանի օգնությամբ: Երրորդը՝ ծրագիրը թույլ է տալիս աշխատել բազմաէջ փաստաթղթերի հետ: Տարբեր էջերի օբյեկտները կարող են տեղադրվել նույն շերտի վրա, սակայն սովորաբար չեն համագործակցում: Յուրաքանչյուր էջի շերտերը կախված չեն իրարից, ինչը թույլ է տալիս պատկերները խմբագրել անհատականորեն:

Ուսումնառության նյութ. Լրացնել աղյուսակները


| Առավելություններ | |
|------------------|--------------------|
| Կենտային գրաֆիկա | Վեկտորական գրաֆիկա |
| | |

| Թերություններ | |
|------------------|--------------------|
| Կենտային գրաֆիկա | Վեկտորական գրաֆիկա |
| | |

| | |
|--|--|
| | |
|--|--|

1.2. CorelDraw ծրագրի պատուհանը, գլխավոր ընտրացուցակը: Գրաֆիկական ֆայլերի ֆորմատները


CorelDRAW ծրագրի ինտերֆեյսը բազմաֆունկցիոնալ է և ունի հետևյալ տեսքը: (նկ.1)



նկ.1 CorelDRAW ծրագրի ինտերֆեյսը

Հարմարավետ և արդյունաբեր աշխատանքի համար անհրաժեշտ է միացնել հետևյալ տողերը՝ Tool բառերը:

MenuBar- գլխավոր հրամանների մենյուների տողն է, որտեղից բացվում են տարբեր բազմաթիվ հրամաններ (նկ.2):



նկ.2 MenuBar-գլխավոր հրամանների մենյուների տող

StatusBar-կարգավիճակի տողն է, որը գտնվում է ֆայլի ներքևի հատվածում: StatusBar-ը ցույց է տալիս ֆայլի կարգավիճակը տվյալ պահին և ընտրված օբյեկտների լիցքն ու եզրագիծը (նկ.3):



նկ.3 StatusBar-կարգավիճակիտող

Standard-ծրագրի հիմնական տողն է, որի օգնությամբ կարելի է կատարել զրոբալ փոփոխություններ ծրագրի հետ, այսինքն՝ open, save, print: Այն ստատիկ է և անփոփոխ աշխատանքի ընթացքում (նկ.4):



նկ.4 Standard-ծրագրի հիմնական տող

PropertyBar- հատկությունների տողն է, որի վրա երևում են ընտրված գործիքների հատկությունները: Հատկությունների տողը դինամիկ է, այսինքն՝ փոխվում է ցանկացած գործիքին համապատասխան

Ճկ.5):




Ճկ.5 PropertyBar-հատկությունների տող

Toolbox-գործիքների տողն է, հիմնական գործիքներն են, որոնց օգնությամբ կատարվում է աշխատանքը CorelDRAW-ում: Գործիքները կարող են ունենալ սեփական Toolbar-եր(Ճկ.6):




Ճկ.6 Tool box-գործիքների տող

Բացի այս տողերից, որոնք բացվում էն ծրագրի ցանկացած դաշտի վրա բացվող կոնտեքստային մենյուից, աշխատանքի համար անհրաժեշտ է միացնել նաև գույները, որոնք բացվում են Window մենյուի Color Palettes ենթամենյուից(Ճկ.7):



Ճկ.7 ColorPalette-գույների տող

Ծրագրի միջավայրում հարմարավետ աշխատելու համար ստեղծված են հատուկ պանելներ Dockers-ներ, որոնք բացվում են Window մենյուի Dockers ենթամենյուից և իրենցից ներկայացնում են առանձին պատուհաններ, որտեղ հավաքված են տվյալ գործիքը կամ ռեժիմի հրամանները (Ճկ.8):





Ճկ.8 Shaping դոկեր

CorelDRAW-ի գլխավոր մենյուն ունի հետևյալ տեսքը և կատարում է հետևյալ գործողությունները՝

- File-ֆայլերի բացումը, փակումը, իմպորտը, ներմուծումը ուրիշ ձևաչափի ծրագրերից, արտահանումը ուրիշ ձևաչափի ծրագրեր, ֆայլի պահպանումը, տպումը և այլն
- Edit- աշխատանք հիշողության բուֆերի հետ
- View-ֆայլի տեսքի ռեժիմները:
- Layout- աշխատանք ֆայլի էջերի հետ

- Arrange-օբյեկտների դասավորվածության վերահսկումը
- Effects- վեկտորային գրաֆիկայի հատուկ էֆեկտներ
- Bitmaps- վեկտորային գրաֆիկայի վերածումը կետային գրաֆիկա և աշխատանք կետային գրաֆիկայի էֆեկտների հետ
- Text- աշխատանք տեքստերի հետ
- Tools-ինտերֆեյսի, ռեժիմների, գույների, գրադարանների և VisualBasic մակրոսների պարամետրերի փոփոխություն
- Window-աշխատանք մի քանի բացված ֆայլերի հետ, Dockers-ների և բացված ֆայլերի վերադասավորում
- Help-օգնության պատուհան:

Ուսումնառության նյութ. Լրացնել վանդակները



1.3. ToolBox աշխատանքային գործիքների հավաքածուն



Pick Tool--Նշում ենք ցանկացած պատկեր.



Shape Tool--Պատկերը ձևափոխելու գործիքներ.



Group Tool--Պատկերները կտրելու գործիքներ.



Zoom --Խոշորացույց



Freehand Tool ► Կորերի կառուցման գործիքներ



Rectangle Tool ► Կարող ենք գծել ուղղանկյուն կամ քառակուսի պատկերներ



Ellipse- Կարող ենք գծել շրջան կամ էլիպս



Polygon Tool ► բազմանկյուններ



Basic Shapes Պատրաստի պատկերներ , ավտոֆիգուրաների



Text Tool(F8) - տեքստ,



Interactive Blend Tool ► Ինտերակտիվ գործիքներ



Paintbucket—Նշված գույնով մեկ ուրիշ պատկերին ենք նշում և լիցք ենք տալիս ստանալով նույն գույնը.



Outline (F12) ► Ընտրում ենք եզրագծի ձևերը, գույները.




Interactive Fill--Եթե ունենք պատրաստի ձևավորված լիցք, կարող ենք փոփոխել.

Ուսումնառության նյութ . Թվարկել ինչ գործիքներ են օգտագործվել նշված պատկերները ստանալու համար

| | | | |
|--|--|--|--|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |


1.4 Պատկերների կառուցվածքը: Ուղղանկյուններ, էլիպսներ, քաղամանկյուններ և աստղեր, պարույրներ, ցանցեր, ստանդարտ պատկերներ:

Վեկտորային օբյեկտը նման է կոնտուրի, սակայն կոնտուրների և օբյեկտների հատկությունները տարբեր են: Օբյեկտները կարող են ունենալ այդպիսի իրենց բնորոշ հատկություններ: Օրինակ, ուղղանկյունը կարող է փոխել անկյունների ձևը, ինչպես բոլոր անկյունները միասին, այնպես էլ՝ ամեն անկյունն առանձին(նկ.14) :




նկ.14 Ուղղանկյան հատկությունների ձևափոխման ռեժիմները

Այս ուղղանկյունը՝ կոնտուրների գործիքներով նկարաված կոնտուր է և ունի միայն կոնտուրների հատկություններ (նկ15) :




նկ15 կոնտուրների հատկությունների տողը

Ellipse գործիքով կարելի է նկարել էլիպս և կիրառել մասնատման կամ եզրագծի ռեժիմները (նկ16) :




Ֆիլ 16 Ellipse գործիքի ռեժիմները Polygon գործիքով կարելի է ստանալ բավականին հետաքրքիր նախշեր, եթե տեղաշարժենք հանգույցները Shape գործիքով (Ֆիլ 17) :



Ֆիլ 17 Polygon գործիքով ստացված պատկերներ

Կոնտուրները չունեն այդ հատկություններից ոչ մեկը : Օբյեկտը կարելի է վերածել կոնտուրի, իսկ հակառակը՝ ոչ: Սովորաբար օբյեկտները վերածվում են կոնտուրների հետագայում տարբեր փոփոխությունների ենթարկման համար: Այդ գործողությունը կատարվում է Arrange-մենյուի Convert To Curves ենթամենյուով: Օբյեկտները “ջարդվում” են՝ ստանալով կոնտուրների հատկություններ և ձևափոխման հնարավորություններ: Լայն օգտագործում ունի նաև հետևյալ տարբերակը, երբ եզրագիծը պետք է դարձնել անփոփոխ օբյեկտ: Այս գործողությունը կատարվում է Arrange- մենյուի Convert Outline To object ենթամենյուով (Ֆիլ 18):



Ֆիլ 18 Եզրագծի վերածումը օբյեկտի

Օբյեկտները CorelDRAW ծրագրում ստեղծվում են՝ օգտագործելով թե՛ կոնտուր նկարող գործիքներ, և թե՛ հետևյալ հատուկ գործիքներով, որոնցից ամեն մեկն ունի իր իր հատկությունները: Ստանդարտ օբյեկտների դասին են պատկանում՝ Rectangle Tool, Ellipse Tool, Graph Paper Tool, Polygon Tool, Spiral Tool: Կոնտուր նկարող գործիքներով ստեղծվող օբյեկտները կոնտուրներ

են՝ ունեն միայն կոնտուրի հատկություններ և չունեն օբյեկտին բնորոշ ոչ մի հատկություն: Ցանկացած օբյեկտ ունի իր հատկությունը, որը կարելի է օգտագործել պարզ օբյեկտի ստեղծման ժամանակ: **RectangleTool** - Տվյալ գործիքի հատկությունների օգնությամբ կարելի է փոխել օբյեկտի չափերը, պտտել օբյեկտը ցանկացած անկյան տակ, ստանալ օբյեկտի հայելւած և պատկերը՝



աջից ձախ, կամ վերևից ներքև, միաժամանակ կլորացնել օբյեկտի անկյունները, երբ <կողպեքը> փակված է և առանձին՝ երբ բաց է, կարելի է նաև որոշել եզրագծի չափերը:




GraphPaper - ցանց, որի տողերի և սյուների քանակը կարելի է որոշել նրա հատկությունների տողից: Ungroup մենյուով կարելի է առանձնացնել ցանցի բոլոր հատվածները:

EllipseTool- Տվյալ գործիքի հատկությունների օգնությամբ կարելի է փոխել օբյեկտի չափերը, պտտել օբյեկտը ցանկացած անկյան տակ, ստանալ օբյեկտի հայելւած և պատկերը՝ աջից ձախ, կամ վերևից ներքև, կարելի է ընտրել թե՛ ամբողջ էլիպսը, և թե՛ էլիպսի որոշակի հատվածը, միայն եզրագիծը և այլն:

Polygon Tool - այս գործիքը նախատեսված է բազմանկյուններ և աստղեր ստեղծելու համար: Տվյալ գործիքի հատկությունների տողից կարելի է ընտրել անկյունների քանակը: Պտտելով անկյունները Shape գործիքով, կարող ենք ստանալ բազմաթիվ նախշեր:


Spiral-գործիքը նախատեսված է սպիրալ տիպի պատկերներ նկարելու համար: Է **BasicShapes**-ստանդարտ օբյեկտների նկարչական ձևեր, որոնք օգտագործվում են պատրաստի պատկերների ստեղծման համար:

Ա. ռազադրանք 1.




1.5. Կորներ, հանգույցներ, փակ, բաց, միացված գծեր: Freehand, Bezier գործիքները, Artistic Media (գեղագրական գիծ) գործիքը, չափադրման գծեր:

Վեկտորային պատկերները կազմված են կոնտուրներից՝ կոր գծերից, որոնք ունեն հատուկ մաթեմատիկական նկարագրում: Այդ կորերը կոչվում են Բեզիեի կորեր, և ունեն եզրագծի տեսք: Կոնտուրները կազմված են մեկ կամ մի քանի սահմանակից՝ սեզմենտներից, որոնք սահմանափակված են հանգույցներով: Սեզմենտները կարող են ունենալ ուղղագիծ կամ կորագիծ տեսք: Տեսքը որոշում է սեզմենտին սահմանափակող հանգույցի տիպը: Հանգույցները կարող են լինել հարթ և անկյունային: Հարթ հանգույցների ծալը սահուն է, իսկ անկյունայիններում՝ անկյունային: Հանգույցները ղեկավարվում են կառավարման գծերով: Կոնտուրները կարող են լինել փակված կամ բացված: Փակված կոնտուրները կարող են ունենալ լիցք և եզրագիծ (Fill; Outline), իսկ բացվածները՝ միայն եզրագիծ (Նկ.12):



Նկ.12 Բացված կոնտուր

Կոնտուրը՝ մաթեմատիկական հասկացություն է, որը, որպես երկրաչափական օբյեկտ, չունի հաստություն: Կոնտուրի տեսանելիության համար նրան տալիս են եզրագիծ: Քանի որ վեկտորական օբյեկտներն ունեն մաթեմատիկական նկարագիր, ապա պատկերի չափերի փոփոխումը չի վատացնում պատկերի որակը: Կոնտուր ստեղծող գործիքները գտնվում են ToolBox-ի Freehand Tool-շարքում: Այս շարքի բոլոր գործիքները ստեղծում են կոնտուրներ, սակայն յուրաքանչյուր գործիք ունի իր հատկությունները, որոնք բացվում են միաժամանակ տվյալ գործիքը PropertyBar-ի վրա ընտրելիս (Նկ.13):



Նկ.13 Polyline Tool գործիքի հատկությունների ստղ



Bezier Tool-ն սեղմել մկնիկը և բաց թողնել, ապա այս գործիքով կարելի է նկարել ուղիղ գծեր, սակայն հիմնականում տվյալ գործիքը նախատեսված է կոնտուրների կառավարման գծերի ստեղծման համար: Կոնտուրի հանգույցները և սեզմենտները կարելի է կառավարել Shape Tool գործիքի և համապատասխան Property Tool-ի օգնությամբ

Shape Tool-ը թույլ է տալիս աշխատել թե՛ կորերի հետ, թե՛ հանգույցների հետ անմիջապես Freehand Tool-ազատ ռեժիմով մատիտ, որը թույլ է տալիս ստանալ մեկ կոնտուրին պատկանող սեզմենտ

Artistic Media Tool-նկարչական վրձնի ռեժիմ, որը թույլ է տալիս ստանալ հետաքրքիր էֆեկտներ Preset Tool-սովորական վրձնի ձևեր, որոնք նկարում են պատրաստի օբյեկտներով Brush- նկարչական վրձնի ձևեր, որոնք նկարում են ընտրված պատկերի ձևով

Sprayer - վրձինը նկարում է ցայտվող օբյեկտներով: Յանկացած նկարից կարող ենք հանել որոշակի հատված՝ օգտագործելով Arrange - մենյուի Break -ենթամենյուն: Հետո տվյալ նկարը »ջարդվում« է Arrange - մենյուի Ungroup-ով և դուրս է բերվում այն հատվածը, որն անհրաժեշտ է: CalligraphicTool-կալիգրաֆիկ վրձինն է PenTool- գրիչի ռեժիմ PolylineTool- ուղիղ գծերի ռեժիմ 3PointCurveTool– 3 կետով ստացված կորերի ռեժիմ InteractiveConnectorTool- բլոկ-սխեմաների կապերի կոնտուրներ, որոնք թույլ են տալիս չկտրվող կապերով ցանկացած օբյեկտներ կապել իրար DimensionTool- չափագրման գործիքներ :

Ուսումնառության նյութ . Կառուցել տրված պատկերները



1.6. Օբյեկտի ձևի խմբագրման գործիքներ: Հանգույցների նշում, տեղափոխում, խմբագրում, կորերի բաժանում և հանգույցների միացում:

CD-ի կարևոր առանձնահատկություններից է այն, որ նախօրոք ստեղծված ստեղծված օբյեկտի ձևը փոխելու համար չկա անհրաժեշտ այն նորից կառուցելու, այլ օբյեկտների ձև կարող ենք փոխել ինչպես սահուն, աստիճանաբար, այնպես էլ կտրուկ: Ձևի փոփոխության աշխատանքները կատարվում են Shape գործիքի մենյուում գտնվող գործիքների օգնությամբ: Դրանք են.

1. Shape – ձևի հիմնական
2. Kiiife - դանակ, որը թույլ է տալիս կորը բաժանել երկու օբյեկտների
3. Eraser – ռետին, մաքրում է օբյեկտների ցանկացած մասը
4. Free Transform (ցուցադրական ձևափոխում)

Օբյեկտներն ընտրելու համար օգտագործվում է Pick գործիքը, իսկ հանգույցները ընտրելու համար Shape գործիքը: Մի քանի հանգույցներ նշելու համար ընտրումը պետք է կատարել Shift կոճակը սեղմած: Բոլոր հանգույցները ընտրելու համար կամ պետք է ընտրել Shape գործիքը և սեղմել մկնիկի ձախ կոճակը օբյեկտի շուրջը գծել շրջանակ, կամ նշել հանգույցներից մեկը և սեղմել Ctrl+Shift+Home կոճակը:

Հանգույցները նշելուց հետո, դրանք կարելի է տեղափոխել կամ մկնիկի օգնությամբ կամ ստեղծաշարով կուրսորի տեղաշարժման ստեղծների օգնությամբ:

Հանգույցների խմբագրումը կարելի է կատարել ֆորմատավորման պանելի կոճակների օգնությամբ: Դրանք են






- + Add – ավելացնել հանգույց
- Delete – հեռացնել հանգույց
- Toline – ուղղանկյուն սեգմենտ
- To Curve - կորագիծ ցեգմենտ
- Cusp – կտրման կետ
- Smooth – հարթեցման հանգույց
- Symmetrical – սիմետրիկ հանգույց
- Auto Close - ավտոփակում
- Join – միացնել հանգույց
- Break Apart - բաժանել կորը
- Reverse Curve - փոխել ուղղությունը
- Elastion Mode - ճկուն տեղաշարժել

Knife գործիքով սեղմել կորի վրա նրա վրա առաջանում են 2 հանգույցներ: Արդյունքում բաց կորը վերածվում է 2 բաց կորերի, իսկ փակ կորը վերածվում է բաց կորերի: Այս գործիքը կարող է աշխատել տարբեր ռեժիմներով: Դրանք որոշվում են ֆորմատավորման պանելի 2 գործիքներով:

1. Leave As One Object – չբաժանել օբյեկտները: Այս ռեժիմի միացման ժամանակ կորի կտրված մասը դառնում է ոչ թե նոր օբյեկտ, այլ սկզբնական կորի ճյուղ:

2. Auto Close On Cut - ավտոմիացում: Երբ այս ռեժիմը միացված է, ապա գործիքի աշխատանքային ռեժիմը իր մեջ ներառում է ոչ թե մեկ, այլ 2 սեղմում կորի կետերին: Այդ դեպքում կտրման գիծը, որը միացնում է այդ 2 կետերը, դառնում է կորի սեգմենտ:

Ի տարբերություն այն ծրագրերի, որոնք աշխատում են կետային պատկերների հետ, որտեղ ռետին գործիքը օգտագործվում է պատկերի որևէ մասի մաքրման համար, հանդիսանալով կարևոր գործիք, CD-ում վեկտորական գրաֆիկայում հանդիսանում է շատ հարմար լրացուցիչ գործիք: Այնտեղ այն կատարում է ուրիշ դեր, ոչ թե մաքրում է պատկերի մասերը, այլ ձևափոխվում է այն:




1.7. Կոորդինատային ցանց, ուղղորդներ, օբյեկտների հավասարեցումը

 **Rulers**--Տեղադրում կամ հանում ենք քանոնները.

 **Grid**--Տեղադրում կամ հանում ենք վանդակներ՝ կոորդինատային ցանցը

 **Guidelines**--Տեղադրում կամ հանում ենք քանոնից բերված ուղղորդները, որով հավասարեցնում ենք պատկերները.

 **Align and Distribute**--Նշում ենք թե նշված պատկերները որ կողմով իրար հավասարվեն.



- Top** –Վերև ,
- Center**—Մեջտեղ,
- Bottom**—Ներքև,
- Left**---Ձախ,
- Center**—Մեջտեղ,
- Right**—Աջ

Snap to Grid --Նշված պատկերը մագնիսի պես կպնում է **Grid**-ի վանդակներին, կամ եթե կետից բռնենք պատկերը ցույց է տալիս կետի հատումը **Grid** -ի հետ:

Snap to Guidelines--Սա նույնպես, նշված պատկերը մագնիսի պես կպնում է **Guidelines**-ին:
Dynamic Guides --Սա ցույց է տալիս նշված օբյեկտի կենտրոնի կետը երբ հատվում է մյուս օբյեկտի կենտրոնի շուրջը, կամ որևէ աստիճանային թեքության վրա:

Setup- ▶



 **Grid and Ruler setup**--Այստեղ կատարում ենք բացված պատուհանում **Grid** -ի վանդակների կարգավորումները:

 **Guidelines Setup**--Կարգավորում ենք գույները:

 **Snap to Objects Setup**--Այստեղ նշում ենք թե օբյեկտը օբյեկտի որ մասին հատվի և նշում բացված պատուհանում:


 **Dynamis Guides Setup**--Այստեղ նշում ենք թե օբյեկտները հատվելիս որ աստիճանում հատվեցին, և որը ցույց տա:

Ուսումնառության նյութ . Նշել օբյեկտների հավասարեցման տեսակները



1.8. Կոորդինատային ցանց, ուղղորդներ, օբյեկտների շերտեր:

CorelDRAW ծրագիրն կարող է վերահսկել բոլոր պատկերներն և օբյեկտները՝ շերտերի և էջերի դրոշմի օգնությամբ, որը կոչվում է Object Manager և բացվում է Window-Dokers-Object




Manager մենյուից (նկ33):

Սովորաբար բոլոր օբյեկտները ստեղծվում են Layer1- ի վրա, այսինքն՝ առաջին շերտի վրա: Ցանկացած նոր շերտ ավելացնելու համար կոնտեքստային մենյուից ընտրում ենք NewLayer մենյու: Այս դրոշմում բոլոր էջերը, օբյեկտները և շերտերը, որոնք ընդգրկված են տվյալ ֆայլի մեջ, երևում են ծառի տեսքով: Էջերի օգտագործումը շատ հարմար է, բայց ավելի օպտիմալ է դառնում շերտերի միաժամանակ օգտագործման հետ: Մեծ մակետների և պրոնկտների ժամանակ օբյեկտների դասավորվածությունը կարող է բերել բարդությունների: Նախագծի սկզբնական ժամանակաշրջանում, երբ օբյեկտները չեն վերաձաձկում միմյանց, դժվար է ճիշտ որոշել օբյեկտի դիրքը մյուսների նկատմամբ: Երբ առաջանում է ընտրության և վերադասավորման խնդիր՝ հարմար է օգտվել շերտերից: Ընտրող՝ թափանցիկ ժապավենի համակարգչային պատկերումն է, որտեղ տեղադրվում են տարբեր օբյեկտներ: Ընտրի վրա միանգամից երևում են պատկերի բոլոր պարամետրերը՝ գույնը և եզրագիծը: Ընտրողը դասավորվում են սյունակաձև: Կարելի է ստեղծել ցանկացած քանակի շերտեր: Տվյալ շերտի վրա նկարելու համար պետք է դրոշմից ընտրել այդ շերտը, ապա նկարել: Ցանկացած շերտ կարելի է դարձնել անտեսանելի, արգելել տպելը և փոփոխություն փակել փոփոխությունների հնարավորությունը: Ընտրողի ձախ հատվածում կան 3 տիպի նշաններ (նկ34)



նկ34 Ընտրողի կառավարման նշանները


1. Աչք-միացնել կամ անջատել տեսանելիությունը
2. Մատիտ- արգելել կամ թույլատրել փոփոխությունները
3. Տպիչ-արգելել կամ թույլատրել տպելը Եթե Object Manager-ում բացել Page-ի կողքի ' ' +'' նշանները, ապա տեսանելի կդառնան բոլոր շերտերը, որոնք գտնվում են այդ էջի վրա: Եթե բացել Layer- ի կողքի ' ' +'' նշանը, ապա տեսանելի կդառնան բոլոր օբյեկտները, որոնք գտնվում են այդ շերտերի վրա (նկ35):



նկ35 Ընտրողի և օբյեկտների տեսանելիությունը:


Շնորհների և օբյեկտների դասավորվածությունը կարելի է փոխել մկնիկով: Սեղմելով և պահելով CTRL կոճակը, կարելի է միաժամանակ նշել մի քանի օբյեկտ, ապա խմբավորել նրանց Group մենյուով: Նույն օբյեկտի կրկնօրինակը որևէ ուրիշ շերտի վրա ստանալու համար հնարավոր է միայն Copy/ Paste ռեժիմով: Եթե կա շերտ, որը պետք է ներկա լինի բոլոր էջերի վրա, ապա կանգնում ենք այդ շերտի վրա և կոնտեքստային մենյուից ընտրում Master ռեժիմը: Ցանկացած փոփոխություն, որը կատարվում է այդ շերտի հետ, կկատարվի բոլոր էջերի վրա: Շնորհը ջնջելու համար օգտագործում ենք Delete հրամանը:

Ուսումնասիրության նյութ




1.9. Մի քանի օբյեկտներից մեկի ստացում: Պատկերների պատճենում, նախորդ գործողության կրկնում: Օբյեկտների խմբավորում, կոմբինացիա, տրամաբանական գործողություններ՝ հատում, միացում, բացառում:

Մի քանի պարզ օբյեկտների օգնությամբ կարելի է ստեղծել բարդ պատկերներ: Եթե պատկերված են մի քանի օբյեկտներ, ապա կարելի է միավորել այդ օբյեկտներն օգտագործելով օբյեկտների Shaping հատկությունը, որը միանում է նրկու հավասարազոր եղանակով: Եթե նշենք մի քանի օբյեկտ, ապա Property Bar-ի վրա կբացվի տվյալ հատկությունը: Նրան կարելի է միացնել նաև Window\Dokers Shaping դոկերի օգնությամբ: Տվյալ դոկերի Source Object, TargetObject, հատկությունների օգնությամբ կարելի է տեսնել գործողությունների արդյունքը կամ օրիգինալ օբյեկտի վրա SourceObject, կամ էլ կրկնօրինակի՝ TargetObject (նկ26):



նկ26 Shaping դոկեր


Shaping-ռեժիմները հետևյալն են՝ Weld-միավորում (նկ27): Գործողության արդյունքում ստանում են ընդհանուր եզրագիծ և առաջին պլանում գտնվող օբյեկտի գույնն ունեցող օբյեկտ:



նկ27 Weld ռեժիմ Trim-հանում: Գործողության արդյունքում

օբյեկտներից հանվում է ընդհանուր հատվածությունը: Intersect- հատվածության հիման վրա ստեղծվում է նոր օբյեկտ, որը ստանում է ներքևի օբյեկտի հատկությունները, լիցքը և եզրագիծը: Մնացած 3 ռեժիմները ունեն նույն հատկությունները՝ հանում է մեկ օբյեկտը մյուսից և վերջնական օբյեկտը հանդիսանում է կոնտուրը (նկ28) :


Simplify Front Minus Back; Back minus Front:



նկ28 Simplify, Front Minus Back, Back minus Front հատկություններ

Առաջին ռեժիմի ժամանակ վերևի օբյեկտը կարող է գտնվել սահմանի վրա, իսկ հաջորդ ռեժիմների ժամանակ օբյեկտները պետք է պարտադիր տեղադրված լինեն իրար մեջ: Տվյալ հատկությունները աշխատում են հիմնականում պարզ օբյեկտների հետ և նրանց աշխատանքի արդյունքում օբյեկտները վերածվում են փակված կոնտուրների իրանց բոլոր հատկություններով: Ստացված կոնտուրները պարտադիր փակված են և կարող են ունենալ լիցք: Կոնտուրները փակելու համար

կարելի է նշել այդ կոնտուրները և օգտագործելով **Combine** ռեժիմը, որը միանում է **Arrange** մենյուի **Combine** ենթամենյուից, ստանալ ընդհանուր կոնտուր, որի հանգույցները հետագայում միացնել իրար **Shape** գործիքով (նկ29):




նկ29 Combine ռեժիմը

Կրկնօրինակի ստեղծումը ծրագրի մեջ կարելի է կատարել մի քանի եղանակով՝


- 1 Copy/Paste - ռեժիմը, որի ժամանակ օգտագործվում է հիշողության բուֆերը: Այդ պատճառով ռեժիմը նպատակահարմար է կիրառել նկարը ծրագրից ծրագիր տանելու ժամանակ:
- 2 Սեղմել “+” ստեղծիչը: Կրկնօրինակը ստեղծվում է օրիգինալի վրա:
- 3 Պատկերի տեղափոխման ժամանակ սեղմել “բացակ” ստեղծիչը:
- 4 Պատկերի տեղափոխման ժամանակ սեղմել մկնիկի աջ կոճակը:

Այս եղանակներով ստացված կրկնօրինակներն անկախ կրկնօրինակներ են, այսինքն՝ կատարելով փոփոխություններ օրիգինալ օբյեկտի հետ, կրկնօրինակի հատկությունները չեն փոփոխվում: Edit-Duplicate- մենյուի օգնությամբ կարելի է ստանալ տեղաշարժված կրկնօրինակ, որի տեղաշարժման չափերը գրվում են **Property Bar** –ի **Duplicate Distance** դաշտում թվային տեսքով (նկ30):




Այս բոլոր եղանակներով ստացված կրկնօրինակները չեն գբաղեցնում ծրագրի բուֆերը և համակարգիչը աշխատում է ավելի արագ: Կարելի է ստեղծել այնպիսի կրկնօրինակներ, որոնք կապված լինեն օրիգինալի հետ, այսինքն՝ փոխելով օրիգինալի հատկությունները կփոխվեն նաև կրկնօրինակներից:

Այդ տիպի կրկնօրինակներ ստեղծվում են **Edit- Clone** մենյուի օգնությամբ (նկ31):




նկ31 Clone մենյու

Եթե փոփոխություն արվի օրիգինալի հետ, նույն փոփոխությունը կարվի նաև կլոնի հետ: Եթե պետք է որոշել, թե որ օբյեկտն է օրիգինալ, իսկ որը՝ կլոն, ապա ընտրում ենք օբյեկտը, և բացելով կոնտեքստային մենյուն՝ ընտրում **SelectMaster**: Եթե փոփոխենք կլոնը, ապա օրիգինալը չի փոփոխվի, իսկ կլոնը կդառնա անկախ օբյեկտ: Կլոնի հատկությունները վերականգնելու համար կոնտեքստային մենյուից ընտրում ենք **Revert To Master** մենյուն: Բացված պատուհանից ընտրվում է այն պարամետրերը, ըստ որոնց պետք է վերականգնել կլոնը (նկ32):




Ֆիգ.32 Revert To Master մենյուն

Ուսումնասիրության նյութ .Կառուցել տրված պատկերները




2. Կառուցել տրված պատկերները



1.10. Գունային մոդելներ և ռեժիմներ: RGB, CMYK, HSB, Lab մոդելներ: Bitmap, Grayscale, RGB, Indexed Color և CMYK ռեժիմներ: Օբյեկտների ներկումը CorelDraw -ում:

Գույնի նկարագրման մեջ կարևորագույն խնդիր է գույնի արտահայտումը թվային տեսքով: Բոլոր գույները ստացվում են մի քանի հիմնական կամ հիմնական գույների խառնուրդից՝ որոշակի տոկոսային հարաբերությամբ: Այսինքն՝ մաթեմատիկորեն ցանկացած գույն նկարագրվում է ինչպես հիմնական կոմպոնենտների հարաբերություն: Լայն տարածված են հետևյալ գույների նկարագրման տիպերը՝ գունային մոդելները (RGB, CMYK, Lab և HSB): Գույները լինում են ճառագայթ արձակող և արտացոլված: Ճառագայթ արձակողները լույս տվող օբյեկտների գույներն են, մնացածներն՝ արտացոլվածները: Գույների հիմնական կոմպոնենտները կոչվում են կանալներ (նկ. 9):



Նկ. 9 Գունային կանալներ


Ճառագայթ արձակող մոդելներից է RGB մոդելը (Red-կարմիր, Green-կանաչ, Blue-կապույտ): Երբ չկա ոչ մի գույն, ապա ստացված պատկերը սև է, իսկ 3 գույն միասին հավասարաչափ քանակով խառնելիս ստացվում է սպիտակ գույն: Երկու գույնի միավորման ժամանակ ստացվում է ավելի բաց գույն, քան բազայինները: Այս ռեժիմով ստացված գույները կոչվում են additive: Այս մոդելի մեջ գույների կոդավորումը կատարում է սկաները, իսկ արտահայտվում են դրանք մոնիթորի վրա: CMYK (նկ. 10)- այս մոդելը նկարագրում է արտացոլված գույները, որոնք ստացվում են սպիտակից հանած RGB-ի հիմնական գույները և կոչվում են սուբտրակտիվ գույներ:

Երբ գույն չկա, ապա պատկերը ստացվում է սպիտակ:

Սպիտակ – R = Cyan (կապույտ)

Սպիտակ – G = Magenta (մաջնետա)


Սպիտակ – B = Yellow (դեղին) Եթե փորձենք ստանալ սև գույն՝ խառնելով բոլոր գույները, ապա սև գույն չենք ստանա: Դրանից ելնելով, ավելացվել է առանձին K (Black – սև), որի անվանումը վերցվել է Key բառից: Այս մոդելները ունեն ապարատային կախում, այսինքն՝ մեկ մոդելից մյուսն անցնելու համար պետք է աշխատեցնել գույնի ուղղման սխեման:



Նկ. 10 CMYK և RGB մոդելներ

Lab և HSB մոդելները չունեն ապարատային կախում, դրա համար բավականին լայն տարածում են ստացել: Lab– մոդել է, որը հիմնվել է մարդու աչքի գույների ընդունելու եղանակի վրա: L(Lightness)– պայծառություն, որն առանձնացված է բոլոր գույներից:
 a– կոմպոնենտ, որը փոփոխվում է կանաչից մինչև կարմիր:
 b– կոմպոնենտ, որը փոփոխվում է կապույտից մինչև դեղին:

HSB(նկ. 11)–նկարիչների մոդել է, որը հիմնված է գույների երանգների որոնման վրա: H–Hue–գույնի երանգ B – Brightness –պայծառություն



S - Saturation –հագեցվածություն


նկ 11 HSB մոդել

Օբյեկտների ներկումը CorelDraw -ում:

Լիցքերը լինում են` Nofill-անգույն Uniform Fill–լիցք մեկ գույնով, որն ընտրվում է Window մենյուի Color Palettes ռեժիմով միացած գույների ցանկից (նկ20) :




նկ 20 ColorPalettes գույների ցանկ: Linear- գրադիենտային տիպի լիցք, գծային գրադիենտ,որի պատուհանից կարելի է ընտրել անկյունը, գրադիենտի քայլերի քանակը, գրադիենտի գույների քանակը, որոնք փոխվում են Custom մենյուով մկնիկի Double Click-ի օգնությամբ ավելացնելով ցանկացած գույնը: Նույն պատուհանից բացվում են գրադիենտային տիպի Radial, Conical, Square ձևերը (նկ 21):




նկ21 Գրադիենտ գործիքի պատուհանը

Two color Pattern-լիցք նրկգույնանի նախշով: Այս պատուհանում կարելի է նաև ստեղծել լիցք

Create մենյուով(նկ22):




Full color (նկ23)-բազմագույն լիցքեր, որոնց գույները անփոփոխ են, սակայն չափսերը կարելի է կառավարել Interactive Fill Tool գործիքի օգնությամբ:



նկ23 Full color -բազմագույնլիցքեր

